ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» օգոստոսի 2013թ. N 329-Ա

ք. Արմավիր

ՀԵՆՐԻԿ ԽՐՈՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի երկրորդ մասով, 114-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ 2008 թվականի հուլիսի 25-ին կնքված N 151 աշխատանքային պայմանագրի 5.1 կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետի 2013 թվականի օգոստոսի 12-ի զեկուցագիրը և 2013 թվականի հուլիսի 10-ի ծանուցագիրը.

որոշում եմ՝

1. Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ <<Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հենրիկ Խրոյանի հետ 2008 թվականի հուլիսի 25-ին կնքված N 151 աշխատանքային պայմանագիրը համարել լուծված:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ